ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2024 թվականի N 676-Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետը և 8-րդ կետը, Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 4-րդ մասը և 25-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված, պետական սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան քաղաք, Տանձու լենջ թաղամաս 3 ճամբար հասցեում գտնվող, 2024 թվականի մարտի 22-ի դրությամբ 172 400 000 ՀՀ դրամ գնահատված շուկայական արժեքով, 4 066.6 քառ. մետր մակերեսով շենք-շինությունները, ինչպես նաև դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 3 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 22012024-09-0031 վկայական) (այսուհետ՝ գույք) նվիրաբերել

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին (COAF) (այսուհետ՝ հիմնադրամ)՝ համաձայն սույն որոշման հավելվածի հանրօգուտ ծրագրի՝ այն վերակառուցելու և «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» արտադպրոցական, նորարարական, կրթական կենտրոն ստեղծելու նպատակով:

2. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հիմնադրամի տնօրենի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ.

1) նվիրաբերվող գույքը կառուցելու և «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» ծրագիր իրականացնելու նպատակով, հիմնադրամին ֆինանսական միջոցների հատկացման պահից սկսած, բայց ոչ ուշ, քան գույքը հիմնադրամին հանձնելու պահից վեց ամիսը, հիմնադրամի կողմից 5 տարիների ընթացքում կիրականացվի 2 500 000 000 ՀՀ դրամի ներդրում՝ համաձայն սույն որոշման հավելվածի հանրօգուտ ծրագրի.

2) սույն որոշման 1-ին կետից բխող նվիրաբերության հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման հիմնադրամի միջոցների հաշվին.

3) նվիրաբերության պայմանի խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջով նվիրաբերությունը կհամարվի վերացված և նվիրաբերություն ստացողը պարտավոր է Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել նվիրաբերված գույքը՝ դրա վրա կատարված անբաժանելի բարելավումների հետ միասին, որոնք փոխհատուցման ենթակա չեն.

4) սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրի կնքումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ